

ՆԻՆՈ ԲԵՍԵԼԻԱ
ՆԻՆՈ ԲՈԿԵՐԻԱ
ՄԱԿԱ ԿՈՐՉԱԶԵ

ՈՒՍՈՒՑՉԻ
ԳԻՐՔ

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱՄ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

Քաղաքացիական կրթության օժանդակ
ձեռնարկ IX դասարանի համար



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

PH international 
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱՄ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

Ուսուցչի գիրք

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռարկ IX դասարանի համար, երկրորդ հրատարակություն:

Ձեռնարկի երկրորդ հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ «Սեզանում»: Երկրորդ հրատարակությունը ներկայացնում է ձեռնարկի առաջին հրատարակության փոքր-ինչ փոփոխված տարբերակը:

Հեղինակներ՝

Նինո Բեսելիա

Նինո Բոկերիա

Մակա Կորձաձե

Աշխատանքային խմբի առաջնորդ՝

Նինո Բեսելիա

Առաջին հրատարակչության վրա աշխատել են՝

Խորհրդատուներ

Նաթիա Նացվիշվիլի

Քեթևան Չանուաշվիլի

Թարգմանիչ՝

Ջոյա Մխիթարյան

Խմբագիր՝

Գիսանե Հովսեփյան

Ձևավորող՝

Մարթա Թաբուկաշվիլի

Էջադրող՝

Յանա Դանիելյան

©Project Harmony, Inc., 2015

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ձեռնարկի առաջին հրատարակությունը տպագրվել է ՍՊԸ **«Գազեթի Սաքարթվելոս մացնեում»:**

ISBN 978-9941-0-7499-8

Ձեռնարկը ստեղծվել է ամերիկացի ժողովրդի աջակցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Ձեռնարկում տրված տեղեկությունների և նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատու են հեղինակները, և այն չի ներկայացնում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:



ՆԱԽԱԲԱՆ

2010-2014 թթ. PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացավ քաղաքացիական կրթության և մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր քաղաքացիական կրթության դպրոցական ծրագրի որակի բարելավումը և ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացում երիտասարդների մասնակցության աջակցումը:

Այս նպատակի իրականացման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է քաղաքացիական կրթության ուսուցման չորս օժանդակ ձեռնարկ, անցկացվել են մանկավարժների վարժանքներ, ստեղծվել են դպրոցական քաղաքացիական կրթության ակումբներ, աշակերտների, մանկավարժների և ծնողների քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման համար հատկացվել են փոքր դրամաշնորհներ, հիմնադրվել է քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողով, կազմակերպվել են քաղաքացիական կրթության ամառային ճամբարներ, ստեղծվել է քաղաքացիական կրթության և քաղաքացիական նախաձեռնությունների երկու վեբ-պորտալ՝ www.civics.ge և www.initiatives.ge, աշակերտների համար անցկացվել են սոցիալական մեդիայի վարժանքներ և հիմնադրվել են քաղաքացիական կրթության գրադարաններ:

Սույն ձեռնարկը մեկն է այն օժանդակ ձեռնարկների մատենաշարից, որոնք ստեղծվել են ծրագրի շրջանակներում: Ձեռնարկը շատ քիչ փոփոխություններով երկրորդ անգամ տպագրվել է 2015թ. քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» նոր ծրագրի շրջանակներում, որը կրկին իրականացվում է PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ:

Ձեռնարկը նախատեսած է մանկավարժների համար և ընդգրկում է շատ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ: Դասագրքի միջոցով մանկավարժները կկարողանան աջակցել աշակերտներին դասից ստացած գիտելիքն առօրյա կյանքում և գործունեության մեջ կիրառելուն, համախոհների և գործընկերների որոնման հարցում, որպեսզի աշակերտները ծրագրեն և իրագործեն հասարակության համար օգտակար նախագծեր: Լավ քաղաքացիության սկզբունքների գործնական կիրառությամբ աշակերտները կմասնակցեն Վրաստանի՝ որպեսզի հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը և զարգացմանը:

Ապագա հաջողությունների ցանկությամբ՝
PH International, Վրաստան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ներածություն	5
Ինչպես օգտվենք դասագրքից	7
Կիրառած մեթոդների նկարագիրը	8

Թեմա 1

Ինչ է ժողովրդավարությունը, և ինչ է նշանակում ժողովրդավարական հասարակությունը	14
--	----

Թեմա 2

Ակտիվ քաղաքացիություն և քաղաքացիական հասարակություն: Ժողովրդավարական հասարակության բնութագրիչները	18
---	----

Թեմա 3

Խտրականություն և հավասարություն – բոլորը տարբեր են, բոլորը՝ հավասար	24
---	----

Թեմա 4

Ինչ է քաղաքացուն անհրաժեշտ հասարակությունից, և հասարակությանը՝ քաղաքացուց	30
---	----

Թեմա 5

Ժողովրդավարական հասարակության առավելություններն ակտիվ քաղաքացիության համար	36
--	----

Հավելված	38
Դասագրքի այբբենական բառարան	42
Օգտագործված գրականություն	46
Օգտակար հղումներ	47

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


Ժողովրդավարական, իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ է դաստիարակել այնպիսի ազատ, ինքնուրույն, իրազեկ անհատ, որը մրցունակ և հաջողակ կլինի արագ փոփոխվող աշխարհում:

Տվյալ դասագիրքը քաղաքացիական կրթության ուսուցիչներին կօգնի դասարանական և արտադասարանական ակտիվությունների միջոցով զարգացնել աշակերտի՝ ակտիվ քաղաքացուն անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները:

Այս դասագրքի նպատակն է խորացնել աշակերտների գիտելիքը ժողովրդավարական հասարակության հիմնական բնութագրիչների մասին, զարգացնել այս գիտելիքի՝ կյանքում օգտագործման հմտությունները և կարողությունները, ցույց տալ ակտիվ քաղաքացիության անհրաժեշտությունը և դրական արդյունքները: Սրա նախատեսմամբ, ուսուսական նյութն այնպես է կազմված, որ ծառայի ոչ թե ուղղակի գիտելիքի կուտակմանը, այլ այս գիտելիքի ստեղծագործարար օգտագործմանը, փորձի ձեռքբերմանը, հետազոտմանը: Ուսանման գործընթացի մեջ պետք է ներգրավվի աշակերտի երևակայությունը, սատարման, պատասխանատվության զգացումը:

Ուսումնական գործընթացի ընթացքում կպլանավորվի և կիրականացվի մեկ կոնկրետ նախագիծ, որը կնպաստի աշակերտների մեջ ակտիվ քաղաքացիական կարողությունների զարգացմանը և կրացահայտի հասարակական կյանքի մեջ նրանց ընդգրկվածության դրական նշանակությունը:






ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵՆՔ ԳՐՔԻՑ

Դասագիրքը բաղկացած է հինգ թեմայից: Սրանք են.

1. Ինչ է ժողովրդավարությունը, և ինչ է նշանակում ժողովրդավարական հասարակությունը,
2. Ակտիվ քաղաքացիություն և քաղաքացիական հասարակություն: Ժողովրդավարական հասարակության բնութագրիչները,
3. Խտրականություն և հավասարություն – բոլորը տարբեր են , բոլորը՝ հավասար,
4. Ինչ է անհրաժեշտ քաղաքացուն հասարակությունից, և հասարակությանը՝ քաղաքացուց,
5. Ժողովրդավարական հասարակության առավելությունները ակտիվ քաղաքացիության համար:

Յուրաքանչյուր թեմա սկսվում է տեսական մասով: Այնուհետև տրված են առաջադրանքներ, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի օգնությամբ, և որոնց նպատակն է դասի ժամանակ յուրացված տեսական նյութի խորացումը: Եթե դասարանի մեծ լինելու պատճառով չհաջողվի կատարել դասի մեջ տրված բոլոր դասարանական առաջադրանքները, դասարանական առաջադրանքներն ընտրեք ըստ ձեր հայեցողության: Յուրաքանչյուր թեմայի վերջում աշակերտներին առաջադրանքներ են տրվում, որոնք միասնականության մեջ ստեղծում են նախագիծ: Այս նախագծերը միտված են հասարակական օգտակար որևէ գործի իրականացմանը: Առաջադրանքներում աշակերտների համար մանրամասն բացատրված է, թե որ փուլում ինչ է իրականացնում՝ վերջնական նպատակին հասնելու համար:

Այս դասագրքից կարող եք օգտվել հիմնական և բազային աստիճանների IX դասարանում: Դասագրքում տրված թեմատիկական աշակերտներին կօգնի խորացնել իրենց գիտելիքը քաղաքացիական կրթության կարևոր հարցերի մասին: Գրքին կցված է բառարան՝ դասագրքում տրված տերմինների բացատրությամբ:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ակտիվ քաղաքացիության ուսուցման էությունը կայանում է նրանում, որ աշակերտներին սովորեցնեք ժողովրդավարական հասարակությունում ապրելու կարգը, սեփական և ուրիշների իրավունքների հարգանք և ներողամտություն կամ՝ գործնական մոտեցումները և վարքի մոդելը: Այսպիսի թեմաների մասին խոսելիս, բնականաբար, բազմաթիվ հարցեր են ծագում: Այս ամենից ելնելով՝ ուսուցման ժամանակ խնդրում ենք ի նկատի ունեցեք մի քանի ընդհանուր բնույթի երաշխավորություն.

- Ուսուցումը վարե՛ք ինտերակտիվ մեթոդներով: Փորձե՛ք հետաքրքրել անխտիր բոլոր աշակերտներին:
- Աշխատե՛ք աշակերտներին դասի թեմայի մասին խոսելիս ազատ կարծիք արտահայտելու և հարցեր առաջադրելու հնարավորություն տալ:
- Աշակերտներին մի՛ մատուցեք պատրաստ պատասխաններ: Հա՛րց առաջադրեք և նրանց հետ գտե՛ք այդ հարցի տրամաբանական պատասխանը:
- Օժանդակե՛ք քաղաքացիական կրթության ինտեգրմանն այլ առարկաներին, մասնավորապես՝ պատմությանը, աշխարհագրությանը, գրականությանը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

Ուսումնա-հետազոտական գործունեություն - նախատեսում է աշակերտների կողմից նոր գիտելիքի ձեռքբերում՝ իրենց շրջապատում, դպրոցում, հասարակությունում առկա իրականության ուսումնասիրման, տվյալների հավաքման, նրանց մշակման և արդյունքների վերլուծման հիման վրա:

Իրադրական մոդելի ստեղծում - նախատեսում է դասի ընթացքում իրական իրավիճակների մոդելավորում աշակերտների կողմից՝ որոշակի որոշումների ինքնուրույն կայացման և գնահատման նպատակով:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային աշխատանքի մեթոդի օգտագործման ժամանակ աշակերտներն աշխատում են լսել միմյանց, համագործակցել և փոխհամաձայնության գալ: Փոքր խմբերում աշխատանքը արդյունավետ մեթոդ է պատասխիվ աշակերտներին ակտիվացնելու համար:

Խմբային աշխատանքը բաղկացած է երեք հիմնական փուլերից. խմբի կողմից առաջադրանքի կատարում, խմբի կողմից աշխատանքի ներկայացում, արդյունքների ամփոփում/ընդհանրացում:

1. Աշակերտներին բաժանե՛ք խմբերի:
2. Նրանց հստակ ցուցում տվեք. աշակերտը պետք է գիտենա, թե ինչ էք նրանից պահանջում անել և ինչ ժամկետում: Ցանկալի է ցուցումը գրել գրատախտակի կամ մեծ ֆորմատի թղթի վրա այնպես, որ այն բոլորը լավ տեսնեն:

3. Աշխատանքի կատարման համար տրամադրված ժամանակն անցնելուց մի քանի ժամ առաջ աշակերտներին հիշեցրե՛ք, որ սպառվում է խմբում աշխատելու ժամանակը: Խումբը պետք է ամփոփի աշխատանքի արդյունքները մեկ թերթի վրա և որոշի, թե ով կներկայացնի այն:
4. Խմբի անդամներին խնդրե՛ք ներկայացնել աշխատանքը:
5. Ամփոփե՛ք և ընդհանրացրե՛ք արդյունքները:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

- Մեկ խումբն աշխատում է մեկ սեղանի մոտ:
- Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ ժամանակը նախօրոք է սահմանված:
- Խումբն արդյունքները ձևակերպում է գրավոր, մեկ թերթի վրա:
- Ցանկալի է, խմբում հենց սկզբից սահմանվի, թե ով կանի գրառումները և ով կներկայացնի արդյունքները:
- Խմբային աշխատանքին բնորոշ են արդյունքների ներկայացումը կամ/և դասարանական քննարկումը:

ՄՏԱՎՈՐ ԳՐՈՂ

Այս մեթոդը կիրառվում է դասարանում գաղափարներ հավաքելու և դասակարգելու համար: Մտավոր գրոհը երկու փուլից է բաղկացած: Առաջին փուլում տեղի է ունենում գաղափարների հավաքում, իսկ երկրորդում՝ դրանց դասակարգում/որակավորում:

1. Սկզբից ներկայացրե՛ք հարցը և ձևակերպե՛ք այն կարճ հարցադրման տեսքով (ցանկալի է, որ հարցը գրվի գրատախտակին):
2. Աշակերտներին ծանոթացրե՛ք/հիշեցրե՛ք մտավոր գրոհի կանոնները.
 - Գաղափարների հավաքման փուլում թույլ չի տրվում քննադատել/գնահատել արտահայտված մտքերը: Արտահայտված բոլոր գաղափարները պետք է արձանագրվեն գրատախտակին, թեպետ հնարավոր է ճշգրտվի, թե ինչ է ենթադրում աշակերտը:
 - Պակաս կարևորություն ունի գաղափարների որակը, ավելի կարևոր է գաղափարների քանակը:
3. Աշակերտներին խնդրե՛ք ներկայացնել հարցի հետ կապված որքան հնարավոր է ավել գաղափար, նրանց արտահայտած յուրաքանչյուր գաղափար գրե՛ք գրատախտակի վրա:
4. Հարցումը շարունակե՛ք մինչև գաղափարների սպառվելը (գաղափարներ հավաքելիս թույլ չտաք քննադատական և գնահատողական արտահայտություններ անել):
5. Դասարանի հետ միավորե՛ք համանման գաղափարները, առանձնացրե՛ք պակաս նշանակալի գաղափարները:
6. Վերջում քննարկե՛ք փասցած ցանկը:

ԲԱՆԱՎԵՃ

Օգտագործվում է յուրաքանչյուր դասի գործնական մասում տրված թեմայի ավելի խորը իմաստավորման և թեմայի քննարկմանը աշակերտների ընդգրկվածության բարձրացման համար:

Այս մեթոդը կիրառվում է հարցի մշակման համար, նրա միջոցով զարգանում են աշակերտների փաստարկված դատողության, մտքի համառոտ արտահայտման, միմյանց ունկնդրելու և եզրակացություններ անելու հմտությունները և կարողությունները:

Բանավեճը շարունակվում է միջին հաշվով 10-25 ժամ: Դասի ժամանակի սուղության պատճառով ուսուցիչն առանձնապես ուշադրություն պետք է դարձնի բանավեճի գործընթացի պլանավորմանը և կառավարմանը:

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Բանավեճի հարցերը նախօրոք պետք է լինեն սահմանված (հարցերի հաջորդականությունը հիմնականում տրված է Աշակերտի գրքում):
2. Բոլորին պետք է տրվի կարծիքի արտահայտման հավասար հնարավորություն, պետք է պահպանվի ժամանակի սահմանաչափը՝ մոտավորապես 2 րոպե կարծիքի արտահայտման համար:
3. Բանավեճի համար հատկացված ժամանակի 10-15 %-ը պետք է տրամադրվի արտահայտված մտքերի ամփոփմանը և եզրակացություններ անելուն: Հիմնական եզրակացությունները պետք է արձանագրվեն գրատախտակին:

ԲԱՆԱՎԵՃԸ ՎԱՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Ազատ բանավեճ - այս դեպքում աշակերտները ձեռքի բարձրացումով ակնարկում են ուսուցչին, որ ուզում են կարծիք արտահայտել: Որպեսզի պահպանեք հաշվեկշիռը, նախօրոք որոշե՛ք, թե յուրաքանչյուր աշակերտ քանի անգամ կունենա կարծիք արտահայտելու հնարավորություն (օրինակ՝ դասարանում նախօրոք բաժանե՛ք ժետոններ կամ լուցկու հատիկներ): Եթե բանավեճի համար քիչ ժամանակ ունեք տրամադրված, յուրաքանչյուր աշակերտի տվե՛ք լուցկու մեկական հատիկ, եթե ավել ժամանակ ունեք՝ 2-3 հատիկ: Յուրաքանչյուր կարծիքի արտահայտման ժամանակ աշակերտները մեկական հատիկ պետք է ձեռք վերադարձնեն: Բանավեճի վերջում ստուգե՛ք, թե ում մոտ քանի հատիկ լուցկի է մնացել (լուցկու հատիկների կամ ժետոնների օգտագործմամբ կարող եք մրցում կազմակերպել շարքերի կամ խմբերի միջև):
2. Հաջորդական բանավեճ - ուսուցիչը հերթով կամ իր հայեցողությամբ հարց է տալիս կոնկրետ աշակերտի կամ խմբի (օրինակ՝ «Առաջին խմբից/շարքից ո՞վ կպատասխանի այս հարցին»): Կարող եք օգտագործել գրիչը կամ այլ իր, որը պայմանականորեն կկատարի շարժական բարձրախոսի դեր: Բանավեճի ևս մեկ տարբերակ է հետևյալը. այն աշակերտը, որը պատասխանում է բանավեճային հարցի, ինքն է որոշում, թե ով կլինի հաջորդ պատասխանողը:
3. Ներկայացուցչական խումբ - աշակերտը մի քանի կամավորի խնդրում է դուրս գալ և դասարանի առջև բանավիճել տրված հարցի շուրջ: Ներկայացուցչական խմբի բանավեճի ավարտից հետո մնացած աշակերտները մեկնաբանություններ են անում:

ՏԵՍԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Ուսուցչի շնորհանդեսը չպետք է գերազանցի 10 րոպեն:

Դժվար է պլանավորել համառոտ շնորհանդես և նրան նախօրոք է անհրաժեշտ պատրաստվել:

Ուսուցիչը նախօրոք պետք է սահմանի նյութի մատուցման պլանը:

Շնորհանդեսը բաղկացած է երեք հիմնական փուլից:

Ցանկալի է, որ հիմնական մասը չպարունակի երեք գլխավոր հարցից ավելի:

1. **Ներածություն** - այս մասին տրամադրվում է շնորհանդեսի ընդհանուր ժամանակի մոտավորապես 20%-ը:

Աշակերտներին ներկայացրե՛ք ձեր ասելիքը.

ա) շնորհանդեսի նպատակը,

բ) աշակերտների հետաքրքրությունը հարուցող հարց կամ օրինակ,

գ) շնորհանդեսի հիմնական մասի վերլուծություն (ինչ հարցերի է վերաբերում շնորհանդեսը):

2. **Հիմնական մաս** - այս մասին շնորհանդեսի ընդհանուր ժամանակի մոտավորապես 70% -ն է տրամադրվում, ցանկալի է, որ հիմնական մասը չպարունակի երեք գլխավոր հարցից ավելի: Աշակերտներին ներկայացրե՛ք հիմնական ասելիքը.

1. Հարց 1 – համառոտ ամփոփում, անցում:

2. Հարց 2 – համառոտ ամփոփում, անցում:

3. Հարց 3 – համառոտ ամփոփում:

3. **Եզրակացություն** - այս մասին շնորհանդեսի ընդհանուր ժամանակի մոտավորապես 10%-ն է տրամադրվում:

Կրկնե՛ք աշակերտների համար այն, ինչ արդեն ասացիք (շնորհանդեսի հիմնական հարցերի ամփոփումը և հիմնական եզրակացությունները):

10-րոպեանոց շնորհանդեսի համար լրիվ բավական է մեկ դիդակտիկ նյութի գործածումը: Դիդակտիկ նյութը պարզ և հասկանալի պետք է լինի: Ցանկալի է, որ դիդակտիկ նյութով տրված տեղեկությունը բառացիորեն չկրկնի շնորհանդեսային տեքստը: Դիդակտիկ նյութը պետք է ունենա լրացման և նյութը կառուցքավորելու ծանրաբեռնում:

Ինչպես ձեզ հայտնի է, աշակերտների մեծ մասը հիմնական տեղեկությունը տեսողությամբ է ընկալում, հիշողության մեջ ավելի երկար պահվում է լսած, տեսած և գործնականում իրականացված տեղեկությունը: Այդ պատճառով, տեղեկություն մատուցելիս, աշակերտի համար նշանակալի է դիդակտիկ նյութի օգտագործումը և գործնական աշխատանքների իրականացումը:

ԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Երկխոսության միջոցով հնարավոր է հաստատել բաց հաղորդակցություն պրոբլեմային հարցերի քննարկման ժամանակ:

Այս մեթոդը 2000 տարեկան է: Երկխոսության միջոցով հիմնախնդրի կարգավորումը սկիզբ է առնում հունական փիլիսոփայությունից: Որպեսզի երկխոսությունը հաջողությամբ և արդյունավետ ընթանա, անհրաժեշտ է նախատեսել հետևյալ ցուցումները.

1. Հարգե՛ք այն մարդուն, որը ձեզ հետ կիսվում է իր կարծիքով (դուք իրավունք ունեք չհամաձայնել նրան, սակայն նրան լռեցնելու իրավունք չունեք):
2. Ձեր կարծիքն այնպես արտահայտե՛ք, որ ուրիշներին չանարգեք:
3. Պայքարե՛ք արդարության համար (որոշե՛ք և ուղղե՛ք ապատեղեկացումը):
4. Ձեր տեսակետը հասկանալի փոխանցե՛ք:

Երկխոսության գործընթացում ուսուցչի պարտքն է ոչ թե որևէ կոնկրետ դիրքորոշում զբաղեցնելը, այլ բանավեճ վարելը, հարցի հետ կապված քաղաքացիական արժեքներ սահմանելը, գլխավոր կարծիքը ընդգծելը:

Երկխոսություն վարելիս՝ մեզ կօգնեն ճիշտ առաջադրված հարցերը, ինչը զրույցին ուղղություն կտա և կխրախուսի աշակերտների մտածողությունը:

Ուսուցիչը պետք է նախատեսի, որ հնարավոր է, որ իրեն մի քանի դասաժամ անհրաժեշտ լինի, որպեսզի աշակերտներն ակտիվ կերպով ընդգրկվեն բանավեճին, հարմարավետ զգան իրենց և ազատ արտահայտեն իրենց կարծիքը:

ԹԵՄԱ



ԻՆՉ Է
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ,
ԵՎ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ





ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍ 1

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

ԳԻՏԵԼԻՔ

Աշակերտը պետք է յուրացնի ժողովրդավարական հասարակության հիմունքները, ծանոթանա ժողովրդավարական հասարակությանը բնորոշ հիմնական արժեքներին:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտը պետք է կարողանա յուրացրած գիտելիքը կիրառել գործնական աշխատանքում կամ ժողովրդավարական սկզբունքները ներդնել դպրոցում, համայնքում և գործել այս սկզբունքներով:

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔՆԵՐ

Աշակերտը գիտակցում է ժողովրդավարական տիպի հասարակության առավելությունը այլ տիպի հասարակական կարգերի համեմատ, հասկանում է ժողովրդավարական արժեքների հաստատման անհրաժեշտությունը, հարգում է հանդուրժողականության, բազմակարծության և փոխզիջման նվաճման սկզբունքները:

Սկսում էք հարցի ներկայացմամբ՝ 2-3 բույլ:



Համառոտ բնութագրե՛ք դասի գլխավոր նպատակը:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԸ ԲԱՑԱՏՐԵԼԸ ՄԿՍԵՔ ՀԱՐՑԵՐՈՎ.

- Ըստ ձեզ, ի՞նչ է ժողովրդավարությունը:
- Ինչպիսի՞ն է ժողովրդավարական պետությունը: Համա՞յնքը: Հարևանությո՞ւնը: Դպրո՞ցը:

Նկարե՛ք 2 շրջան: Առաջինում գրե՛ք՝ «Ժողովրդավարություն», երկրորդում՝ «Ժողովրդավարական պետություն/հարևանություն/համայնք/դպրոց»: Աշակերտներին առաջադրե՛ք շրջանների շուրջ արված ճառագայթների մոտ գրել ժողովրդավարության (շրջան 1) և ժողովրդավարական պետության, հարևանության, համայնքի, դպրոցի բնութագրիչները (շրջան 2):

Վերլուծե՛ք պատասխանները և բացատրե՛ք, որ ժողովրդավարությանը բնորոշ է մարդու իրավունքների



պաշտպանությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունն անբաժան են: Գոյություն չունի իսկական ժողովրդավարություն այնտեղ, որտեղ պահպանված չեն մարդու իրավունքները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեթոդական մասում տրված հրահանգի համաձայն՝ կատարե՛ք առաջին թեմայի տեսական մասի ներկայացում: Շեշտադրությունն արե՛ք ժողովրդավարությանը բնորոշ տերմինների վրա (բազմակարծություն, հանդուրժողականություն, փոխզիջում):

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

1

Աշակերտներին խնդրե՛ք Աշակերտի գրքում տրված քարտեզի վրա գտնել աղյուսակում թվարկված պետությունները և դատել այս երկրներում ժողովրդավարության զարգացման որակի մասին:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

2

Դասարանը բաժանե՛ք խմբերի (ուսուցիչը նախօրոք պետք է ունենա պատրաստված նյութ 2011 թվականի փետրվարին Մերձավոր Արևելքում ընթացող ժողովրդավարական գործընթացների մասին) և անցկացրե՛ք բանավեճ հանձնարարության շուրջ:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

3

Աշակերտները նախօրոք պետք է կարդան Ռևազ Ինանիշվիլիի «Փոքրիկ տղան Գողգոթայում» պատմվածքը (հնարավոր է, որ այս առաջադրանքը հանձնարարեք տանն ավարտել): Բանավեճ վարեք Աշակերտի գրքում տրված հարցերի օգտագործմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԼԱԽԱԳԾԻ ՎՐԱ - I ԱՍՏԻՃԱՆ.

Յուրաքանչյուր դասի վերջին առաջադրանքը վերաբերում է նախագծի վրա աշխատանքին: 6 դասի ընթացքում աշակերտները սկսում և ավարտում են նախագծի ստեղծումը, աշխատում են համայնքում, դպրոցում կամ հասարակությունում առկա հրատապ խնդիրների վրա, հավաքում և մշակում են նրա հետ կապված տեղեկությունները:


Ինչպես նշեցինք, նախագծի վրա աշխատանքը սկսվում է հենց առաջին դասից: Աշակերտներին տեղեկություններ մատուցե՛ք նախագծի վրա աշխատելու նշանակության մասին:

Ծանոթացրե՛ք նախագծի վրա աշխատելու աստիճանները, բացատրե՛ք, թե ինչպես պետք է նույնականացնեն համայնքում առկա հիմնախնդիրները:

Բոլոր կարևոր տերմինները բացատրված են Աշակերտի և Ուսուցչի գրքերի վերջում կցված բառարաններում: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ աշակերտները հասկանան տերմինների նշանակությունը: Լավ կլինի, եթե կիրառենք «Բառերի պատր»:

ԹԵՄԱ





ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
(ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ)



ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ)

ԴԱՍ 2

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Դասի նպատակը կայանում է նրանում, որ աշակերտները ծանոթանան ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացում քաղաքացիական հասարակության նշանակությանը, գիտակցեն, թե ինչպես վճռեն հիփսախնդիրը և ինչպես մասնակցեն հասարակական գործունեությանը:

Դասը սկսում ենք առաջին դասին յուրացրած նյութի համառոտ հարցմամբ:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Դ Ա Ն Ք

1

Աշակերտներին սովորեցրե՛ք բանավեճը վարելու եղանակները: Նրանց բացատրեք բանավեճի և վիճաբանության միջև տարբերությունը: Նյութը տրված է Աշակերտի գրքում:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Դ Ա Ն Ք

2

Աշակերտները պետք է դատեն ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման մասին:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Դ Ա Ն Ք

3

Աշակերտները պետք է գիտակցեն, թե որքանով է կարևոր հիփսախնդրի վճռման գործընթացին մասնակցելը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

4

Աշակերտները պետք է դատեն հակամարտության կարգավորման և հիմնախնդրի վճռման ուղիների որոնման ռազմավարությունների մասին: Նրանք հանձնարարության միջոցով պետք է գիտակցեն, թե որքան ճնշող է հիմնախնդրի վճռման ժամանակ մեկուսացումը, և որ հիմնախնդրի վճռման լավագույն միջոցը կողմերի միջև համաձայնությունն է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

5

Աշակերտները պետք է անվանեն և գրատախտակի վրա գրեն դպրոցի, հարևանության, համայնքի, փոքրամասնության մեջ գտնվող և սոցիալապես անապահով խմբերը և նրանց հիմնախնդիրները:

Գրատախտակի վրա գրե՛ք «Փոքրամասնություն» բառը և գծե՛ք նրանից դուրս եկող 3 ճառագայթ: Նրանցից յուրաքանչյուրի մոտ գրե՛ք՝ համայնք, հարևանություն, դպրոց: Աշակերտներին խնդրե՛ք ձեզ թելադրել փոքրամասնությունների և սոցիալապես անապահով մարդկանց խմբերը և սյունակով գրե՛ք համապատասխան ճառագայթի տակ:

ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՆ.

Համայնք՝ փախստականներ, տարեցներ, տարեցների ապաստարաններ կամ մանկատների անդամներ, սահմանափակ հնարավորություններով անձինք, ազգային փոքրամասնություններ:

Հարևանություն՝ սոցիալապես անապահով ընտանիքներ, տարեցներ, երեխաներ, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, սահմանափակ հնարավորություններով անձինք:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՀԱՐՑԵՐ ԱՌԱՋԱԴՐԵՔ.

- Ինչ եք կարծում, ի՞նչ է ենթադրում «Ժողովրդավարական սկզբունքով որևէ որոշման կայացում» արտահայտությունը:
- Ինչ եք կարծում, ի՞նչ պետք է անեք փոքրամասնության կամ սոցիալապես անապահով ընտրված խմբի հիմնախնդիրների լուծման համար:

Այս հարցերի շուրջ բանավեճ վարեք այնպես, որ աշակերտները կարողանան ճիշտ ձևակերպել իրենց հայացքները իսկական ժողովրդավարական կարգով որոշումներ ընդունելու մասին: Բացի այդ, ճիշտ սահմանեն, թե ինչպես կարելի է կոնկրետ խմբի հիմնախնդիրները նույնականացնել և կոնկրետ ինչ քայլեր է

անհրաժեշտ անել դրա համար (այս մարդկանց հարցում, նրանց մասին տեղեկությունների հայթայթում, պետական կառույցներից և ինքնակառավարման մարմիններից համապատասխան տեղեկության պահանջում):

Առաջադրանքի նպատակը աշակերտներին փոքրամասնությունների հիմնախնդիրների և նրանց՝ հասարակությանն ինտեգրելու անհրաժեշտության մասին մտորել տալն է:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

6

Մեր դասարանի իրավունքները և պարտականությունները

Դասարանին հարցեր տվեք.

- Հստ ձեզ, ի՞նչ տարբերություն կա կանոնների և պարտականությունների միջև:
- Ի՞նչ կապ կա իրավունքների և կանոնների միջև:

Բանավեճ վարեք (2-3 բույներ):

- Այժմ յուրաքանչյուր իրավունքի դեմ արձանագրեք, թե ինչ կոնկրետ պարտականություն ունի յուրաքանչյուր մարդ այն բանի ապահովման համար, որ ամեն մարդ օգտվի այս իրավունքից:

Օրինակ.

ԻՐԱՎՈՒՆԷՔՆԵՐ	ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<p>ԲՈՒՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆԷՔ ՈՒՆԵՆ, ՈՐ ԻՐԵՆՑ ՀԵՏ ԱՐԴԱՐԱՑԻ ՎԱՐՎԵՆ:</p> <p>ԲՈՒՆՈՒՄ ՈՒՆԵՆ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ...</p>	<p>ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԲՈՒՆՈՒՄ ՀԵՏ ԱՐԴԱՐԱՑԻ ՎԱՐՎԵԼԸ:</p> <p>ԲՈՒՆՈՒՄ ՊԵՏՔ Է ՏԱՄ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ...</p>

Աշակերտներին խնդրեք, որ մեկ անգամ ևս վերանայեն թվարկված իրավունքները և պարտականությունները: Անհրաժեշտ չէ՞ արդյոք ավելացնել որևէ բան: Կարելի՞ է արդյոք օգտվել այս հայտարարություններից՝ որպես ամբողջ դասարանի «Իրավունքներ և պարտականություններ»:

Բացատրե՛ք, որ յուրաքանչյուր խմբի կողմից ստեղծված իրավունքների և պարտականությունների աղյուսակը կարող է միավորվել, ստանալ լրիվ տեսք և ձևավորվել՝ որպես ամբողջ դասարանի իրավունքներ և պարտականություններ:

Առաջադրանքի կատարման արդյունքում երեխաները պետք է վերլուծեն ժողովրդավարական արժեքների առավելությունը, գիտակցեն, որ հենց իրենք են ստեղծում այն կանոնները, ինչով այնուհետև առաջնորդվելու են, որպեսզի պաշտպանեն իրենց և ուրիշների իրավունքները:

Կարճ բանավեճ վարեք հետևյալ հարցերի շուրջ.

- Ցանկանո՞ւմ եք արդյոք պահպանել ձեր կողմից ստեղծված կանոնները:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե որևէ մեկը խախտի որևէ կանոն:
- Անհրաժե՞շտ է արդյոք, որ կանոնների խախտման հետևանքով աշակերտները պատժվեն կամ բացատրություն տան ուրիշներին: Ինչո՞ւ:
- Ո՞վ է պատասխանատու նրա համար, որ բոլորը պահպանեն դասարանի կողմից կազմված փաստաթուղթը:

Ըստ ձեզ, ի՞նչ դրական արդյունք են բերում իրենց՝ աշակերտների կողմից կազմված դասարանական կանոնները: Բերե՛ք երկու օրինակ:

- Պարզեք, կա՞ն արդյոք ձեր դպրոցում աշակերտների հետ կապված որոշակի կանոններ, հրահանգներ կամ ընթացակարգեր, որոնց կազմելուն մասնակցել են աշակերտները:
- Համաձայն եք արդյոք դրանց հետ:
- Կարելի՞ է արդյոք դրանք փոխել: Ինչպե՞ս:
- Ի՞նչ է տեղի ունենում, երբ մարդիկ չեն պահպանում կանոնները:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - II ԱՍՏԻՃԱՆ.

Ստուգե՛ք առաջին աստիճանի առաջադրանքը:

Բացատրե՛ք աշակերտներին, թե ինչ պետք է անեն նրանք երկրորդ աստիճանում, այսինքն՝ ինչպես պետք է ընտրեն նախագծին համապատասխան հիմնախնդիր (տե՛ս՝ Աշակերտի գիրք, էջ 33):

ԹԵՄԱ





ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԱՎԱՍՍԱՐՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՈՐԸ
ՏԱՐԲԵՐ ԵՆ, ԲՈԼՈՐԸ՝ ՀԱՎԱՍՍԱՐ



ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՈՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ, ԲՈԼՈՐԸ՝ ՀԱՎԱՍՏԱՐ

ԴԱՍ 3

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

ԳԻՏԵԼԻՔ

Աշակերտը պետք է գիտակցի մարդու իրավունքների նշանակությունը, գիտակցի, որ մարդու իրավունքները և ժողովրդավարությունը փոխկապակցված և միմյանցից անբաժանելի հասկացություններ են, ծանոթանա այնպիսի տերմինների մանրամասն բովանդակությանը, ինչպիսիք են՝ կարծրատիպը, խտրականությունը, խարանը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտը պետք է կարողանա յուրացված գիտելիքը պրակտիկայում կիրառել կամ բացահայտել իրական կյանքում մարդու իրավունքները և պաշտպանել այս իրավունքները:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆԵՐ

Աշակերտի մոտ պետք է ձևավորվի բացասական վերաբերմունք մարդու իրավունքների խախտման նկատմամբ, նա պետք է գիտակցի, որ չի կարելի այս խախտումների նկատմամբ լինել անտարբեր, և որ ինքն էլ ամենօրյա կյանքում անպայման պետք է պաշտպանի մարդու իրավունքները:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Դ Ա Ն Ք

1

Հիշեցրե՛ք աշակերտներին հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները Վրաստանի պատմությունից, գրականությունից:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Դ Ա Ն Ք

2

Ծանոթացե՛ք «Կեղտոտ սպիտակեղենի» իրավիճակին: Դատե՛ք, թե ինչն է նպաստում կարծրատիպի ստեղծմանը:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

3

Աշակերտները սխեմա 1-ի օգտագործմամբ պետք է ընտրեն երեք հանդուրժողական և երեք անհանդուրժողական վարք, որ բնորոշ է իրենց, պատահաբար են իրենք կատարել, կամ որևէ մեկն է կատարել իրենց նկատմամբ: Այնուհետև լրացրե՛ք աղյուսակ 2-ը:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

4

Աշակերտները պետք է նկարագրեն առաջադրանքի բլոկում տրված նկարը, դատեն սոցիալապես անապահով մարդկանց մասին: Հասարակությունն ինչպե՞ս կարող է օգնել նրանց:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

5

Աշակերտները օրինակներ բերեն, թե ինչպես կարելի է հաստատել հանդուրժողական հայացքները:

Բանավեճ վարեք թվարկված հարցերի շուրջ.

- Նկարագրե՛ք, թե ինչպես կարող է ձևավորվել կարծրատիպը:
- Բերեք կարծրատիպի օրինակ՝ ի դեմս հեռուստահաղորդման կամ կինոֆիլմի հերոսի:

Պատասխանե՛ք հարցերին.

- Ինչո՞ւ են որոշ մարդիկ համախմբվում այնպիսի միավորումների շուրջ, ինչպիսիք են սկիհեղները:
- Խտրականությունը և սնտիապաշտությունը ժսասակար են ոչ միայն «գոհի», այլև իրականացնողի համար: Ինչո՞ւ:
- Ի՞նչ պետք է անեք ձեր շուրջն առկա սնտիապաշտության վերացման համար:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

6

Աշակերտները պետք է ավարտեն Աշակերտի գրքում տրված նախադասությունները: Գրատախտակի վրա գրեք անավարտ նախադասություններ և առաջարկեք աշակերտներին ավարտել դրանք մեկական բառով՝ ըստ իրենց հայեցողության: Այս բառերը գրեք գրատախտակի վրա՝ յուրաքանչյուր նախադասության տակ: Առաջադրանքի նպատակն է, գործնական օրինակների վրա հիմնվելով, աշակերտներին ցույց տալ կարծրատիպային մտածողության նմուշներ:

Բոլոր մաթեմատիկոսները ----- են:
 Ֆուտբոլիստները ----- են:
 Գեղեցիկ կանայք ----- են:

Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

7

Աշակերտներին գիտակցել տվեք խտրականության պատճառները և դրանց վերացման ուղիները:

Աշակերտները կարող են տեքստը և պատասխանում առաջադրանքում տրված հարցերին: Առաջադրանքի նպատակն է բարձրացնել գենդերային հավասարության հարցը: Ընդգծե՛ք դասարանում, ընտանիքում, համայնքում, հասարակությունում կնոջ և տղամարդու հավասար իրավունքները:

«Ցանկալի ուղեկիցը»
(հրահանգը տրված է Աշակերտի գրքում)

ԱՇԽԱՏԱՆՔ ԼԱԽԱԳԾԻ ՎՐԱ - III ԱՍՏԻՃԱՆ.

Լախագծի վրա աշխատելու երրորդ աստիճանում պետք է հավաքել լրացուցիչ տեղեկություններ ընտրված հիմնախնդրի մասին: Աշակերտները պետք է անցկացնեն փոքր մասշտաբի հետազոտություն (նյութը տե՛ս Աշակերտի գրքում, էջ 49-52):

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԻՆՉ Է ԲՈՒԼԻՆԳԸ

ԴԱՍ 4

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Դասի նպատակը աշակերտներին խտրականության հաղթահարման ուղիների հետ ծանոթացնելն է, նրանք պետք է գիտակցեն, թե ինչ է բուլինգը, և ինչպես կարող են խուսափել դպրոցական բռնության այս տեսակից:

Դասը սկսեք տեսական նյութի բացատրությամբ: Շեշտադրումն արեք բուլինգի՝ որպես դպրոցական խտրականության դրսևորման վրա: Մեկ անգամ ևս ընդգծեք մարդկանց բազմազանությունը և նրանց հավասարությունը:

Վարժությունների միջոցով օժանդակեք աշակերտներին, որ մշակեն իրենց՝ երկխոսություն վարելու, ակտիվ ունկնդրելու, էմպաթիայի/ համակարեկցանքի հմտությունները և կարողությունները:

Իրավիճակային օրինակի ընթերցումից հետո վարեք բանավեճ ստորև տրված հարցերի օգտագործմամբ.

- Ինչ էք կարծում, որտե՞ղ է այստեղ անարդարությունը:
- Պատկերացրեք, որ Անրին էք: Ի՞նչ էք զգում:
- Թվարկե՛ք այն գործող անձանց կամ գործող անձին, որի տեղում չէիք կամենա լինել:
- Ի՞նչ կանեիք, եթե այսպիսի իրավիճակ ստեղծվեր ձեր դասարանում կամ ձեր բակում:

Բանավեճի գործընթացն այնպես վարեք, որ չստեղծվի ոչ հարմարավետ միջավայր որևէ կոնկրետ անհատի հարցի առաջաջամամբ: Միևնույն ժամանակ աշակերտները պետք է կարողանան առաջադրանքում նկարագրված իրավիճակը նմանեցնել իրական իրավիճակի, գիտակցեն, որ այս ժամանակ խախտվում են մարդու իրավունքները և հաճախ նույնիսկ խտրականության հետ գործ ունեն: Եթե դասի ժամանակը տալիս է դրա հնարավորությունը, կարող էք առաջադրանքի հերոսներին ընտրել դասարանից և խաղարկել նկարագրված իրավիճակը: Աշակերտներին հիշեցրեք ասացվածքը՝ «Չդատապարտե՛ս հարևանիդ, մինչև գոնե երեք օր քեզ նրա տեղում չպատկերացնես»:

Աշակերտի գրքում տրված են պնդումներ սահմանափակ հնարավորություններով անձանց մասին: Աշակերտները պետք է դատեն, թե որքանով արդարացի է այս անձանց նկատմամբ այսպիսի վերաբերմունքը:

Վարեք բանավեճ՝ կապված բուլինգի հետ:

Աշակերտները հիշեն ասացվածքներ, առակներ՝ կապված խոսքի ուժի հետ: Վարեք բանավեճ բառային խտրականության մասին: Ցանկալի է անցկացնել գրականության հետ ինտեգրված դաս:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - IV ԱՍՏԻՃԱՆ.

Նախագծի 4-րդ աստիճանում աշակերտները պետք է գտնեն հիմնախնդրի վճռման ուղիներ և պլանավորեն նախագիծ:

ԹԵՄԱ

4



ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՂԱՔԱՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ,
ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ՝
ՔԱՂԱՔԱՅՈՒՑ



ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՑ

ԴԱՍ 5

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ.

Աշակերտը պետք է գիտակցի, թե որքանով է նշանակալի քաղաքացու ընդգրկվածությունը հասարակական կյանքում:

ԳԻՏԵԼԻՔ

Աշակերտը պետք է գիտակցի, որ ժողովրդավարական հասարակության քաղաքացիությունը իրավունքների և պարտականությունների միասնականությունն է: Քաղաքացուն պետությունից անհրաժեշտ է սեփական իրավունքների պաշտպանություն, սակայն յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունը և պարտականությունն է սեփական իրավունքների պաշտպանության հետ պաշտպանել նաև ուրիշների նույն իրավունքները:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտը պետք է կարողանա յուրացված գիտելիքը պրակտիկայում կիրառել, այսինքն՝ կարողանա ակտիվ կերպով մասնակցել այս կամ այն հասարակական հիմնախնդրի վճռմանը:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆԵՐ

Աշակերտի մոտ պետք է ձևավորվեն հասարակության ակտիվ անդամին անհրաժեշտ վերաբերմունքներ: Նա պետք է գիտակցի, որ քաղաքացու ակտիվ, ազատ համամասնակցությունը համայնքի և ամբողջապես երկրի քաղաքական կյանքին ժողովրդավարական հասարակության անդամի պարտականությունն է:

Դասը սկսում էք հարցի ներկայացմամբ՝ 2-3 րոպե:

Համառոտ բնութագրեք դասի գլխավոր հարցը:

Դասը սկսեք տեսական նյութի վերլուծությամբ:

Դասարանական առաջադրանք կատարելիս՝ ուշադրություն դարձրեք, որ աշակերտների մոտ ձևավորվի հարցի ճիշտ պատասխանը:

Հասարակությանն ի՞նչ է անհրաժեշտ քաղաքացուց, և՛ ընդհակառակը:

Ինչո՞ւ է ժողովրդավարական պետությունում ակտիվ քաղաքացիությունը կենսակերպ:

Խմբային աշխատանք.

Աշակերտներն ինքնուրույն կարդում են աթենացի զինվորների հուղարկավորության ժամանակ Պերիկլեսի արտասանած ճառը:

Յուրաքանչյուր խումբ գրավոր պատասխանում է հետևյալ հարցերին.

- Ըստ ձեզ, Պերիկլեսն ինչո՞ւ հասարակական գործունեությունից իրեն հեռու պահող մարդուն կոչեց ոչ թե «հանգիստ», այլ՝ անօգուտ մարդ:
- Ելնելով Պերիկլեսի ճառից՝ կարո՞ղ եք անվանել ձեր ծանոթներից այն մարդկանց, ովքեր «օգտակար մարդիկ» կլինեին: Ինչո՞ւ:
- Հիշե՛ք վրաց հասարակական գործիչների, ովքեր նշանակալի լուսա են ներդրել երկրի հասարակական զարգացման մեջ:
- Մեկ անգամ ևս ձևակերպեք, թե ինչ է անհրաժեշտ հասարակությանը քաղաքացուց, և՛ ընդհակառակը: Ի՞նչ է անհրաժեշտ հասարակությանը ձեզանից, և ձեզ՝ հասարակությունից:
- Ըստ ձեզ՝ Պերիկլեսի ժամանակ Հունաստանում կա՞ր քաղաքացու ինքնաիրացման համար հարմար միջավայր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
- Այսօրվա Վրաստանում կա՞ այսպիսի միջավայր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

Խմբերին առաջարկեք դասարանին ներկայացնել իրենց պատասխանները: Բանավեճ վարեք այս հարցի շուրջ:

«Պիտանի չէ այն մարդը, ով կենդանի ժամանակ նման է հանգուցյալի, ապրում է այս երկրում և հոգ չի տանում նրա մասին»: Բանավեճ վարեք այնպես, որ աշակերտները տեսնեն, թե ինչ կա ընդհանուր Պերիկլեսի ճառի և Նիկոլոզ Բարաթաշվիլիի այս տողերի միջև (բանավեճի հարցերը տե՛ս Աշակերտի գրքում, էջ 64):

Աշակերտներին հանձնարարեք կարդալ Օթար Ճիլաձեի խոսքը՝ կապված Ապրիլի 9-ի ողբերգության հետ և տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ պետք է հիշենք Ապրիլի 9-ի հերոսներին:
- Մարդու ո՞ր իրավունքն էին պաշտպանում նրանք:
- «...Մթից միանգամից լույսին դուրս գալը վտանգավոր է. անսովոր դարձած լույսն այնպես կարող է կուրացնել մեզ, որ նույնիսկ հասարակ խոչընդոտը կարող է ճակատագրական լինել մեզ համար»: Ինչ էք կարծում, ի՞նչ նկատի ունի տեքստի հեղինակն այս բառերով: Բանավեճ վարեք այս հարցերի շուրջ: Շեշտադրումն արե՛ք երրորդ հարցի վրա:

Աշակերտներին պատմեք կոնկրետ որևէ մարդու իրավունքների պաշտպանի կյանքի և գործունեության մասին (օրինակ՝ Մահաթմա Գանդի, Մայր Թերեզա, Էլեոնորա Ռուզվելտ, ընտրեք ըստ ձեր հայեցողության): Լսեք նրանցից տեղեկություններ, թե ինչ գիտեն այսպիսի անձանց մասին: Առաջադրեք գտնել և ծանոթանալ մեկ կամ մի քանի իրավունքների պաշտպանի կյանքին և գործունեությանը: Դասարանը բաժանեք խմբերի (4-5 մարդ): Հանձնարարեք կարդալ հատվածներ «խաղաղության պաշտպանների» կյանքից և որոշել, թե ինչն էր միավորում այս մարդկանց:

Խմբային աշխատանք.

Ակտիվության նպատակը. աշակերտները դպրոցի օրինակով գիտակցեն պետության, հասարակության և քաղաքացու փոխվերաբերմունքները:

- Ձևակերպեք, թե ինչ է անհրաժեշտ աշակերտին (ուսուցչին, դպրոցի ցանկացած այլ աշխատակցի) դպրոցից, և ինչ է անհրաժեշտ դպրոցին աշակերտից (ուսուցչից, դպրոցի ցանկացած այլ աշխատակցից):
- Համառոտ վերլուծեք, թե ինչ գործառույթներ ունեն դպրոցը և տեղական ինքնակառավարումը, հիմնախնդրի վճռման համար ինչո՞ւ պետք է դիմենք նրանց, ինչո՞ւ է այս ուղին ժողովրդավարական:

Առակ. «Ինչ վերաբերմունք ունենք»

Աշակերտների համար կարդացեք և գիտակցել տվեք, թե որքան կարևոր է ստանձնած պարտականությունների բարեխիղճ կատարումը:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎՐԱ - V ԱՍՏԻՃԱՆ.

Աշակերտները վերջնական տեսք պետք է տան նախագծին (տե՛ս հավելված, էջ 38-41, Աշակերտի գրքում՝ էջ 83-86):


Աշակերտներին ներկայացրեք պորտֆոլիոյի գնահատման չափանիշները:

Այնուհետև աշակերտները պետք է ձևավորեն նախագիծը, նաև կազմեն դիմումի տեքստ՝ տեղական ինքնակառավարման կամ այլ կառույցների հասցեով, որը պետք է կցված լինի նախագծին: Աշակերտները նախագիծը և դիմումի տեքստը ներկայացնում են հաջորդ դասին: Նախագծի ձևակերպման փուլում աշակերտները կառաջնորդվեն Աշակերտի գրքի 83-84-րդ էջերում տրված հրահանգով:

ԹԵՄԱ



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՍՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿՏԻՎ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ





ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԴԱՍ 6

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Ամփոփում:

ԳԻՏԵԼԻՔ

Աշակերտը պետք է գիտակցի, թե ինչպես կարող է դառնալ ակտիվ քաղաքացի: Նա պետք է իմաստավորի ժողովրդավարական արժեքները և դրանց նշանակությունը ժողովրդավարության զարգացման ճանապարհին: Աշխատեք, որ աշակերտները դատեն յուրաքանչյուր ժողովրդավարական արժեքի մասին: Կարող եք անդրադառնալ աշակերտների կողմից առաջին գլխում լրացված ժողովրդավարության մասին իմաստային քարտեզին, որպեսզի նրանք ավելացնեն նոր ստացած գիտելիքը (տերմիններ, արժեքներ, տեսակետներ և այլն), հմտությունները և կարողությունները, վերաբերմունքները:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտը պետք է կարողանա յուրացված գիտելիքն օգտագործել պրակտիկայում, այսինքն՝ նա պետք է կարողանա իրական քայլեր անել հասարակության համար օգտակար հարցերի վճռման նպատակով, ակտիվ ընդգրկվել համայնքի, դպրոցի հասարակական կյանքին: Դրա համար ըստ հայեցողության կարող է ընտրել ոչ կառավարական կազմակերպություն, աշակերտների միավորում/ակումբ և համագործակցել նրանց հետ:

Խնդրեք աշակերտներին ծանոթանալ իրավիճակին (տե՛ս Աշակերտի գիրք, էջ 78) և դատել, թե ինչ է երկրնտրանքը, և ինչո՞ւ է Սալոմեն դժվարանում որոշում կայացնել:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆԵՐ

Աշակերտը գիտակցում է, որ առանց քաղաքացիական ակտիվության չի կարող զարգանալ ժողովրդավարությունը, և որ իսկական ժողովրդավարական հասարակությունում իսկապես լսում են յուրաքանչյուր քաղաքացու ձայնը:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՌԱՎՈՒՄԻ ՎՐԱ - VI ԱՍՏԻՃԱՆ.

ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Այս դասին աշակերտները ներկայացնում են նախագիծ: Տեղի է ունենում ներկայացված նախագծի/պրոտֆոլիոյի շնորհանդես:

Եթե նախագիծն անհրաժեշտ է ներկայացնել կառավարման համապատասխան մարմիններին, աշակերտներին պատրաստել տվեք վերջնական դիմումի տեքստը և ընտրեք կամավորներ՝ նախագծի ներկայացման համար:

Եթե ըստ նախագծի այսպիսի ներկայացում անհրաժեշտ չէ, սկսեք նրա իրականացումը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կամավորների խումբը ներկայացնում է նախագծի արդյունքները: Կկազմակերպվի բանավեճ:

Դասի ժամանակ անցկացրեք բանավեճ «Ինչ արդյունքներ հետևեցին աշակերտների հասարակական ակտիվությանը» թեմայով: Լա՞վ արդյունք է, բավարար, թե՞ անբավարար: Ինչո՞ւ էք այս արդյունքը ստացել: Այս ուղղությամբ ուրիշ ի՞նչ գործունեությունների իրականացումը կարող է նպատակահարմար լինել:

Աշակերտներին բացատրե՛ք, թե ինչու է ծագել այս կամ այն հիմնախնդիրը: Ի՞նչը չեն կարողացել անել համապատասխանաբար և որտե՞ղ հանդիպեցին դիմակայության, ի՞նչը նրանցից չէր կախված, ի՞նչ պետք է արվի այսպիսի դիմակայության հաղթահարման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ծանոթացեք համառոտ ուղեցույց նյութի, թե ինչպես պետք է գրեք նախագիծ: Նախագծային հայտը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից.

1. Տիտղոսաթերթ
2. Տեղեկություններ հայտատուի վերաբերյալ
3. Նախագծի համառոտ ամփոփում
4. Հիմնախնդրի նկարագիր
5. Նախագծի մանրամասն նկարագիր
6. Նախագծի իրականացման ժամանակացույցը
7. Նախագծի բենեֆիցիարները
8. Նախագծի բենեֆիցիարների քանակը
9. Նախագծի գնահատումը
10. Նախագծի բյուջեն
11. Ռիսկի գործոնների նկարագիր

1. **Տիտղոսաթերթի** վրա տեղադրեք նախագծի անվանումը, նախագծի իրականացման համար սահմանված ժամկետը և նախագծի հեղինակի կամ հեղինակների խմբի անունը:

2. **Հայտատուի վերաբերյալ տեղեկություններն** ընդգրկում են նախագծին մասնակից գլխավոր կողմերի, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց գործունեության մասին համառոտ տեղեկություններ: Այս տեղեկատվական բլոկը պետք է ընդգրկի կազմակերպության հիմնադրման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և նրա կողմից իրականացված այն ակտիվությունները, նախագծերը, որոնք անմիջական կապի մեջ են ներկայացված նախագծի կամ նախագծի որևէ բաղադրամասի հետ: Չմոռանաք մատնանշել յուրաքանչյուր կողմի և կազմակերպության ղեկավարի կոնտակտային տվյալները: Կոնտակտային տեղեկությունների մեջ նշվում են փոստային և էլեկտրոնային հասցեները, նաև՝ հեռախոսահամարը և ֆաքսի համարը: Այսօրվա դրությամբ կազմակերպությունների մեծ մասն ունի իր սեփական կայք-էջը կամ բլոգը, որը նույնպես ցանկալի է, որ նշեք, քանի որ անհրաժեշտության դեպքում նախագծային հայտը քննարկողը մանրամասն տեղեկություններ հենց այս ռեսուրսներից կստանա: Հայտի այս մասում նկարագրեք, թե յուրաքանչյուր գործընկեր ինչ կոնկրետ գործունեություն և ակտիվություն կիրականացնի:

3. **Նախագծի համառոտ ամփոփումը** հիմնականում նրանից հետո է գրվում, երբ նախագծային հայտն ավարտված է: Այս մասում դուք պետք է ամփոփեք և շատ համառոտ ձևակերպեք նախագծի նպատակը, նպատակի իրականացման հիմնական ուղիները և

ակնկալվող արդյունքները: Նախագծի համառոտ ամփոփումն այնպես պետք է ձևակերպվի, որ ընթերցողի մոտ ընդհանուր պատկերացում ստեղծվի նախագծով ակնկալվող արդյունքների մասին: Բացի այդ, աշխատեք համառոտ նկարագրել նախագծի շրջանակներում պլանավորված հիմնական նվաճումները:

4. Հիմնախնդիրների/անհրաժեշտությունների նկարագիր

- սա նախագծի հայտի գլխավոր մասերից մեկն է, որտեղ դուք փաստարկված պետք է հիմնավորեք, թե ինչու եք հայտում առաջադրված հարցը պրոբլեմային համարում: Այս մասի ձևակերպման ժամանակ աշխատեք որքան հնարավոր է շատ փաստարկ, վիճակագրական տվյալ, ձեր կամ ուրիշների դիտարկման արդյունքներն օգնության բերել: Պատասխանեք հարցերին. ինչո՞ւ է առաջացել այս հիմնախնդիրը, ի՞նչ աղբյուրների վրա հիմնվելով եք եզրակացնում պրոբլեմայնությունը: Հիշեք, թե որ հիմնախնդրի առաջաշումը պետք է հիմնվի փաստերի, օբյեկտիվ տվյալների վրա: Այս մասի ձևակերպման ժամանակ խուսափեք այնպիսի դատողություններից, ինչպիսիք են՝ իմ կարծիքով, մեր դիտարկմամբ: Գերադասելի է վերևում բերված տվյալների, փաստերի կամ հետազոտությունների վրա հիմնվելով հիմնավորել հիմնախնդիրը:

5. Հիմնախնդրի մանրամասն նկարագիր

- հայտում առաջադրված հիմնախնդրի կարգավորման համար պետք է տարբերակեք հիմնական ակտիվությունները և ենթակատիվությունները: Ակներևության նպատակով գրի առեք այս ակտիվությունները և այնուհետև յուրաքանչյուրի կողքին գրեք ենթակատիվությունները: Այս մասի նախապատրաստման համար դուք պետք է պատասխանեք հետևյալ հարցերին. «Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում», «Ե՞րբ, ժամանակի կամ նախագծի ո՞ր շրջանում և ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում», «Որտե՞ղ են իրականացվում, ո՞վ է իրականացնում», «Ո՞վ է նրանց իրականացման համար պատասխանատու անձը»: Որպեսզի ձեր և այլ ընթերցողների համար ակնառու դարձնեք նախագծի ակտիվությունները և նրա բաղադրիչ տեղեկությունները, կարող եք բառային նկարագրին կցել գրաֆիկական նկարներ կամ աղյուսակ, որը հաճախ անվանում ենք նաև նախագծի իրականացման գրաֆիկա: Նախագծի մանրամասն նկարագրի մասնատումը հիմնական և ենթակատիվությունների կօգնի ձեզ հետագայում հեշտ կազմել իրատեսական և լավ հաշվարկված բյուջե:

6. Նախագծի իրականացման գրաֆիկը

աղյուսակի տեսքով ներկայացված գործողությունների մանրամասն, ժամանակի մեջ բաշխված պլան է՝ շաբաթների, ամիսների, եռամսյակների և հաճախ՝ տարիների համաձայն: Պլանը ցույց է տալիս, թե որ ակտիվությունը ժամանակի որ շրջանում է իրականացվում: Այս պլանում կարող եք նաև փոքրիկ եռանկյունիով նշել այն ժամանակահատվածը (ամիս, շաբաթ), երբ նախագծում պլանավորված հիմնական ակտիվության նշանակալի նվաճումը պատրաստ կլինի (այս նշումն անգլերեն կոչում

են մայլ-ստոունս կամ միլը մատնանշող քար, ինչը նշանակում է, որ արդյունքը նվաճված է, ակտիվությունների գլխավոր մասն անցած):

7. Անձինք, ովքեր **նախագծից օգուտ են ստանում (բենեֆիցիար)** - այս մասում նկարագրեք, թե ովքեր են այդ մարդիկ/մարդկանց խմբերը, ում օգուտ կրերի տվյալ նախագիծը: Աշխատեք, եթե ոչ ճշգրիտ, գոնե մոտավորապես նշել, թե քանի մարդ կօգտվի կամ քանի մարդու վրա կտարածվի նախագծի արդյունքը: Հետագայում, նախագծի հաջողության գնահատման ժամանակ դուք կօգտվեք այս ցուցումից և կնշեք, կարողացա՞վ արդյոք ձեր նախագիծը ենթադրաբար նշված քանակությամբ մարդկանց սպասարկել: Դրական արդյունքը կլինի ձեր նախագծի հաջողության ցուցանիշներից մեկը:

8. **Բենեֆիցիարների բաժանումը** - ցանկալի է բենեֆիցիարներին բաժանել ըստ կարգերի (օրինակ՝ 30 մանկավարժ, 35 ծնող, դպրոցի վարչության 10 ներկայացուցիչ, համայնքի 100 ներկայացուցիչ և այլն), որպեսզի նախագծի արդյունքների պատկերն ավելի հստակ լինի, իսկ հաջողությունը՝ լավ չափելի:

9. **Նախագծի գնահատումն** ընդգրկում է գնահատման չափանիշները, այսինքն՝ նախագծի այս մասում դուք ցույց եք տալիս, թե ինչով կչափեք և երբ կասեք, որ նախագիծը հաջողված է: Այստեղ դուք կարող եք կազմել հարցարան նախագծի մեջ ընդգրկված մասնակիցների համար: Հարցումը կարող եք անցկացնել նախագծի սկզբում և վերջում, կամ կարող եք հարցում անցկացնել պատահական ընտրությամբ և նախագծի արդյունքի և նրա նշանակության մասին հարցնել հասարակության, նախագծից օգտվող անձանց, տեղական համայնքի, ընտանիքի անդամների կարծիքը:

10. **Նախագծի բյուջեն**, ինչպես նշեցինք, բխում է նախագծի մանրամասն նկարագրից: Այստեղ նշեք նաև, թե ինչ քանակությամբ գումար եք պահանջում դոնոր կազմակերպությունից և ինչ քանակությամբ համամասնակցություն է իրականացնում դիմողը (մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների տեսքով, օրինակ՝ նախագծի իրականացնողների կողմից անհատույց աշխատանք նախագծի համար, նախագծին գիտաժողովների դահլիճի կամ տեխնիկայի տրամադրում և այլն): Հիշե՛ք, կարող է գրվել նախագիծ, որը ֆինանսավորում է պահանջում և, ընդհակառակը, որը չի պահանջում ֆինանսավորում: Կոնկրետ դեպքում ավելի իրատեսական կլինի, եթե նախագիծ գրեք, որի կատարման համար անհատույց կաշխատեք, առանց ֆինանսավորման: Այսպիսի նախագծի իրականացման հնարավորությունն անհամեմատ ավելի մեծ կլինի, քանի որ դժվար է ֆինանսավորում գտնելը, և դա նախագծի իրականացումը ռիսկի տակ կդնի: Իսկ ձեր գլխավոր նպատակը ոչ միայն նախագծի կազմումն է, այլև նրա իրականացումը:

11. **Ռիսկի գործոնների նկարագիր** - մինչև նախագիծը սկսելը անհրաժեշտ է մտածել և գրել, թե ինչ հնարավոր դժվարությունների կարող եք հանդիպել նախագծի իրականացման ժամանակ: Գրի

առեք այս ռիսկ-գործոնները և այնուհետև ամենից շատ ակնկալվող գործոնների հաղթահարման և նրանցից խուսափելու պլան կազմեք: Առանձնացրեք նաև կոնկրետ անձին/անձանց, որոնք նկարագրված ռիսկի դեպքում կիրականացնեն կոնկրետ ակտիվություններ: Գրեք իրականացվելիք անհետաձգելի ակտիվությունների ցանկը և կատարման հաջորդականությունը: Հիշեք, որ ռիսկերի կառավարման մասին ավելի լավ է հենց սկզբից հոգ տանեք, որպեսզի հետագայում նախագծի իրականացումը կանգ չառնի:

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Տվյալ երկրում մշտապես ապրող բնակչության ոչ դոմինանտ մաս, որը մեծամասնությունից տարբերվում է իր էթնիկական, կրոնական կամ լեզվական բնութագրիչներով և ցանկանում է պահպանել իր ինքնատիպությունը:
ԱՊԱԹԻԱ	Հետաքրքրություն չունենալ, բացարձակ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:
ԱՊԱՐՏԵՐԴ	Ռասիստական բաժանման սկզբունք Հարավային Աֆրիկայում, ռասայական խտրականության ձև, որն իրականացնում է կառավարող խավը տեղի բնակչության նկատմամբ:
ԱՎՏՈՎՐԱՏԻԱ	Հուն.՝ ինքնակառավարում՝ պետական կառավարման ձև, որի ժամանակ ամբողջ իրավունքը միայն մեկ մարդու ձեռքին է:
ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ	Կարծիքների բազմերանգության գոյություն և դրանց ճանաչում:
ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ	Գոյություն ունի այն ժամանակ, երբ ամբողջ հասարակությունը և համայնքը, յուրաքանչյուր փոքրամասնական խումբ արդարացիորեն մասնակցում են բոլոր այն որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են այս հասարակության համար նշանակալի հարցերին:
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	Կնոջ և տղամարդու հավասար իրավունքներ և հնարավորություններ, միատեսակ պատասխանատվություն և պարտավորություններ:
ԴԻՎՏԱՏՈՒՐԱ	Տիրող դասակարգի կամ իշխանություն ունեցող անձի անսահմանափակ պետական իշխանություն, բռնապետություն:
ԵՐԿԼՏՐԱՆՔ	1. Տրամ.՝ դատողություն կամ եզրակացություն, որը պարունակում է միմյանց փոխբացառող երկու դրույթ, որոնցից անպայման պետք է ընտրվի մեկը: 2. Այնպիսի իրավիճակ, երբ երկու անցանկալի հնարավորություններից անհրաժեշտ է ընտրել մեկը:
ԷԹՆՈՑԵՆՏՐԻԶՄ	Տեսակետ, ըստ որի մի էթնիկական խումբը գերազանցում է մյուսին:
ԷԼԵԿՏՈՐԱՏ	Մարդիկ, որոնք կարող են մասնակցել տարբեր մակարդակի ընտրությունների և աջակցել որևէ խմբի:
ԷՄԻԳՐԱՆՏ	Անձ, որը մշտական բնակության է ուղևորվում այլ երկիր:
ԸՆԴԴԻՄԱԽՈՍ	Վեճի ժամանակ հակառակ կարծիք ունեցող մարդ:
ԽԱՐԱՆ	Հին Հունաստանում ստրուկի կամ հանցագործի մարմնի վրա արվող դրոշմ: Մարդու առանձնացում՝ բացասական խարանով:
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Առանձին անձանց կամ խմբերի իրավունքների սահմանափակում կամ նրանց նկատմամբ բացասական վերաբերմունք՝ առանց հիմնավորման:

ԿԱՐԾՐԱՏԻՊ

Մարդկանց կամ գաղափարների անչափ պարզեցված, ընդհանրացված և հաճախ չգիտակցված ընկալում, որը, հնարավոր է, առաջացնի նախօրոք ստեղծված բացասական կարծիք և խտրականություն: «Կարծրատիպ» տերմինը կապվում է տպագրական սարքավորման անվանման հետ: Կարծրատիպը մետաղյա ամբողջական տպագրական ձև է, որը ստեղծելուց հետո դժվար է փոխվում: Փոխաբերական իմաստով կարծրատիպը անփոփոխ կրկնված, շաբլոնային է նշանակում:

ԿՈՍՈՒՆԻԶՄ

Հասարակական-քաղաքական գաղափարախոսություն, որի համաձայն ինչպես իշխանությունը, այնպես էլ սեփականությունը պետք է լինեն հասարակության ձեռքում: Հասարակական բարեկեցությունը համընդհանուր մասշտաբի պետք է լինի: Մարքսիստական տեսության համաձայն, կոմունիզմը հասարակական զարգացման վերջնական կետն է, անդասակարգ հասարակություն: Հասարակության յուրաքանչյուր անդամ աշխատում է աշխատելու կարողության և հնարավորությունների շրջանակներում, սակայն ստանում է ըստ պահանջումների:

ԿՈՆՍԵՆՍՈՒՄ

Բոլոր կարծիքների նկատառմամբ խմբին ընդհանուր համաձայնության հանգեցնելը:

ՀԱՄԱՅՆՔ

Երկու կամ մի քանի բնակավայրի կամ գյուղի բնակիչների միավորում:

ՀՈՉԱԿԱԳԻՐ

Փաստաթուղթ, որում ձևակերպված են համաձայնեցված սկզբունքներ և չափորոշիչներ: Հռչակագիրը չի կրում իրավական պարտավորեցնող բնույթ: Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) հաճախ հրապարակում է մեծ ազդեցություն ունեցող հռչակագրեր, որոնք չունեն պարտավորեցնող բնույթ:

ՀՐԱՏԱՊ

Մեծապես նշանակալի, կենսականորեն կարևոր:

ՄԱԿ

Միավորված ազգերի կազմակերպություն: Համընդհանուր խաղաղության ապահովման և պետությունների համագործակցության միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականի հունիսի 26-ին, երբ Սան-Ֆրանցիսկոյի գիտաժողովին 50 պետություն ստորագրեց նրա կանոնադրությունը: Այս օրն ամեն տարի նշվում է աշխարհում՝ որպես Միավորված ազգերի կազմակերպության օր: Ներկայումս ՄԱԿ-ի անդամ է 192 պետություն:

- ՄԱԿ-ի գլխավոր նպատակներն են.
- Պահպանել միջազգային խաղաղությունը:
- Զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքների վրա:
- Իրականացնել միջազգային համագործակցություն՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական հիմնախնդիրների վճռման համար:
- Նպաստել մարդու հիմնարար իրավունքների համընդհանուր հարգանքին բոլորի համար՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից և կրոնից:

ՄԱՐԳԻՆԱԼ

Սոցիալական խմբից դուրս գտնվող, արտաքսված:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին: Հռչակագիրը վերաբերում է ինչպես քաղաքացիական և քաղաքական, այնպես էլ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին: Մասնավորապես, հռչակագրով նախատեսված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, անձնական անձեռնմխելիության իրավունքը և այլն: Համընդհանուր հռչակագիրը իրավաբանորեն պարտադիր չէ, այն երաշխավորական բնույթի փաստաթուղթ է:

ՆԻՉԻԼԻԶՄ

Ժխտարարություն, անտարբերություն ամեն ինչի նկատմամբ:

ՊՈՐՏՖՈԼԻՈ

Աշխատությունների հավաքածու, յուրօրինակ թղթապանակ: Պորտֆոլիոն կարող է ընդգրկել աշակերտի կատարած տնային և դասարանական առաջադրանքները, խմբային նախագծերի հաշվետվությունները և այլն: Պորտֆոլիոյի նշանակույթն այն է, որ աշակերտը հավաքի նյութ, ինքը գնահատի իր աշխատանքը և գիտակցի, թե ինչ գիտելիք է ձեռք բերել և նրա որ հմտություններն ու կարողություններն են զարգացել՝ ընտրված թեմայի վրա աշխատելիս: Պորտֆոլիոն հնարավորություն է տալիս, որ աշակերտը հայտնաբերի, թե ինչ սխալներ է թույլ տվել և ապագայում ինչպես կարելի է նման սխալներից խուսափել:

ՌԱՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդուն ըստ ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկական պատկանելության ցանկացած սահմանափակման, տարբերության, բացառության կամ առավելության շնորհման գործընթաց: Ռասայական խտրականության ժամանակ տեղի է ունենում քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ ոլորտում մարդու անհատական իրավունքների և հիմնարար ազատությունների, հավասարության սկզբունքների ճանաչման և նրա իրականացման հնարավորությունների հերքում, նվաստացում:

ՌԱՍԻԶՄ

Տեսակետ, ըստ որի մարդկանց մի ռասան մյուսներից լավ է:

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՁ

Մարդ, որի մոտ հիվանդության, փասվածքի, մտավոր կամ ֆիզիկական արատի հետևանքով, առողջության այս կամ այն չափով խախտման պատճառով խախտված են օրգանիզմի կենսական ֆունկցիաները, ինչը պայմանավորում է մասնագիտական աշխատանքի կարողության լրիվ կամ մասնակի կորուստ կամ կենցաղի և կյանքի էական դժվարացում, ինչը նրան տանում է գործունակության ժամանակավոր կամ մշտական սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (*Վրաստանի օրենք Բժշկական, սոցիալական փորձաքննության մասին, ընդհանուր դրույթ, հոդված 3*):

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատուկ կանոնավոր գործողություններ (սպանություն, ֆիզիկական և հոգևոր փասսի պատճառում, ծնելիության սահմանափակում, երեխաների բռնի հեռացում հայրենի վայրերից), ինչը նպատակադրում է կոնկրետ էթնիկական, քաղաքական կամ մշակութային խմբի ոչնչացում կամ նրա լեզվի, դավանանքի և մշակույթի ոչնչացում:

ՓՈԽՁԻՋՈՒՄ

1. Փոխզիջման ճանապարհով նվաճված համաձայնություն: 2. Բոլոր տեսակետների նախատեսամամբ՝ խումբը տանել ընդհանուր համաձայնության:

ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հուն.՝ Polis՝ ինքնուրույն, ինքնավար միավորում: Հին Հունաստանում քաղաք-պետությունները մշակութային առանձին կառավարման միավորներ էին: Նրանք ընդհանուր լեզու, կրոնական պատկերացումներ և աշխարհայացք ունեին, թեպետ օրենսդրությունը և քաղաքի կառավարումը ներկայացված էին ըստ ինքնավար պետության սկզբունքի: Քաղաք-պետությունը հույները պոլիս էին անվանում, հենց այստեղից է առաջացել պոլիտիկա՝ քաղաքականություն տերմինը: Այն միայն մեկ քաղաքից էր բաղկացած, ինչպես ժամանակակից Մոնակոյի և Լյուքսեմբուրգի դեպքում է: Հին հունական քաղաք-պետությունները շատ էին տարբերվում միմյանցից կառավարման ձևով, սոցիալական հիերարխիայով, օրենսդրության կառուցվածքով և որոշումների կայացման ընթացակարգերով: Օրինակ՝ Աթենքում ժողովրդավարական կառավարում էր, իսկ Սպարտայում թագավորում էր երկու թագավոր:

ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆ

Լատ.՝ propaganda, բառացիորեն նշանակում է՝ ենթակա է տարածման՝ քարոզչությամբ մարդկանց հայացքների, կարծիքների, ընդհանուր գիտակցության վրա տարբեր խորհրդանշանների միջոցով (բառերով, նշանաբաններով, երաժշտությամբ, լրատվամիջոցներով և այլն) իրականացվում է գաղափարական ներգործում: Նպատակին հասնելու համար քարոզիչը (անձը, որը քարոզչություն է ծավալում), շրջանցում է կամ խեղաթյուրում նշանակալի փաստերը և աշխատում լսարանին մատուցել միայն իր համար ընդունելի տեղեկություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Օգտագործված գրականությանը ծանոթանալը կօգնի ձեզ ավելի խորը ուսուսմասսիրել
դասագրքում քննարկված թեմաները)

1. Մարդու իրավունքների բառարան, Թբիլիսի, 2005 թ.
2. Ակտիվ քաղաքացիության դասագիրք, Ազատության ինստիտուտ, 2005 թ.
3. «Ժողովրդավարության անցումային շրջան և ակտիվ քաղաքացիություն», Մալխազ Բեգիաշվիլի, Դավիթ Բոստոդոնաշվիլի, Դիանա Լեժավա, Դավիթ Լոսաբերիձե, Մարիամ Մկալավիշվիլի, Գիորգի Նոգաձե, Սոլոմոն Նոգաձե, Թբիլիսի, 2007 (DVV international-ի «Թբիլիսիի նախագծերի բյուրո»-ի աջակցությամբ)
4. Ազգային ուսուսական պլան 2011-2016 թթ., հաստատված է Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մարտի 11-ի N36/5 հրամանով
5. «Ուսուցանենք մարդու իրավունքները», դասագիրք ուսուցիչների համար, Հելգե Բրոկման, Ռանհիլդ Լագեր, Էդրիդ Միդտուն, Հոկան Վալ, 1998 թ.
6. Ազգային կրթության ազգային նպատակները, Վրաստանի Կառավարության կարգադրություն N° 84, 2004 թվականի հոկտեմբերի 18, 1. Թբիլիսի
7. Կոմպաս` Դասագիրք մարդու իրավունքների կրթության բնագավառից` երիտասարդների մասնակցությամբ, հեղ.՝ Պատրիցիա Բրանդեր, Ռուի Գոմես, Էլլի Կին և այլն, վրաց. հրատարակ.՝ Գիորգի Կենճոշվիլի, Թբիլիսի, 2004 թ.
8. «Կոմպասիտ», Դասագիրք մարդու իրավունքների կրթության բնագավառից երեխաների համար, հեղինակներ` Նենսի Ֆլաուերս, Ջո Կլեյս, Ռանիա Ֆագահ, Անետ Շնայդեր, Ժուժանա Սելեն, 2009 թ.
9. «Ուսուցիչների իրազեկությունների շրջանակ», Պիտեր Բրետ, Պասկալ Մամպոինտ-Գելարդ, Մարիա Էլենա Սալեմա: Council of Europe: Առաջին վրացական հրատարակություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն, 2009 թ.
10. Բազմերանգության կառավարման հիմունքները, «Գործընկերներ Վրաստան», 2010 թ.
11. «Առաջին քայլեր», Նախնական դասագիրք մարդու իրավունքների կրթության համար, Amnesty International, 1996 թ.
12. Արհեստավարժ ուսուցչի 9 բնութագրիչ, գործնական ուղեցույց
13. Քաղաքացիական կրթություն, Ուսուցչի գրադարան, հ. I, II., Բառարան, տեղեկատու, Թբիլիսի, 2010 թ., Քննությունների ազգային կենտրոն

14. Քաղաքացիական հասարակություն, Համեմատական վերլուծություն (դասախոսությունների դասընթաց), Մարինա Մուսխելիշվիլի, Թբիլիսի, 2006 թ.
15. «Դպրոցից դեպի քաղաքացիական հասարակություն» (Նյութեր ինտերակտիվ ուսուցման համար), 2003, հեղինակների խումբ (Նորվեգիայի փախստականների խորհրդի աջակցությամբ), «Ճանապարհ դեպի իրավունքները», 2002 թ., հեղինակների խումբ (Նորվեգիայի փախստականների խորհրդի աջակցությամբ)
16. «Կյանքը ժողովրդավարական հասարակությունում», Ռոլֆ Գոլոբ, Տեդ Հուդլեստոն, Պիտեր Կրաֆ, Դոն Ռոուլ, Ուիմ Տաելման: Գիրք III: Առաջին վրացական հրատարակություն: Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն, 2009 թ.
17. We the People... Project Citizen – Center for Civic Education, 2001
18. www.hrea.org/compendium
19. www.undp.org/LgalEmpowerment
20. www.wisegeek.com

Օգտակար հղումներ

1. www.civics.ge
2. www.coe.int/compass
3. www.hreoc.gov.au/education/index.html
4. www.minorityrights.org

